

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ ՀՈՎԻԿԻ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04. - «Դատական իրավունք - դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГРИГОРЯН ВААГН ОВИКОВИЧ

ПРОБЛЕМЫ ПОЛНОМОЧИЙ АПЕЛЛЯЦИОННОГО СУДА
В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата
юридических наук по специальности

12.00.04. – “Судебное право – судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности”

ЕРЕВАН 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ս. Գ. Մեղրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր,
դոցենտ Վ. Ա. Գուրեև

իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Վ.Վ. Հովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի Հանրապետության
սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2015թ.-ի հունիսի 29-ին, ժամը 11⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ.-ի մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու

Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:

кандидат юридических наук,
доцент С.Г. Мегрян

Официальные оппоненты:

доктор юридических наук,
доцент В. А. Гуреев

кандидат юридических наук,
доцент В.В. Оганесян

Ведущая организация:

Центр конституционного права РА

Защита состоится 29 июня 2015 г., в 11⁰⁰ часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 27 мая 2015 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук

А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Դատական համակարգի յուրաքանչյուր ատյան օժտված է միայն իրեն հատուկ խնդիրների և գործառնությունների որոշակի շրջանակով: Քաղաքացիական գործերի քննության և լուծման ընթացքում առաջին ատյանի դատարանը նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման արդյունքում կարող է թույլ տալ տարաբնույթ դատական սխալներ, որպիսի պայմաններում, արդար դատաքննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից, հատկապես կարևորվում է դատական ակտերի վերանայման գործուն կառուցակարգերի առկայությունը: Այդ կառուցակարգերի մեջ իր ուրույն տեղն է գրավում դատական ակտերի վերաքննության ինստիտուտը: ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի, որպես ՀՀ դատական համակարգի երկրորդ ատյանի, կարևորագույն խնդիրն է՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը, ինչպես նաև՝ վերջինիս կողմից թույլ տրված դատական սխալների վերացումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք կամ ՔԴՕ) ամրագրված եռաստիճան դատական համակարգի առկայության պայմաններում դժվար է թերագնահատել վերաքննության ինստիտուտի և վերաքննիչ դատարանի տեղն ու դերը այդ համակարգում: ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: 2006թ. կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՔԴՕ-ն լրացվեց 231.2 հոդվածով, որով առաջին անգամ սահմանվեց, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը վարույթ է ընդունում և քննում է ոչ թե բոլոր, այլ՝ միայն այն վճռաբեկ բողոքները, որոնք համապատասխանում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշակի չափանիշների: Այդ չափանիշները, հետագայում որոշակի փոփոխությունների և լրացումների ենթարկվելով հանդերձ, հիմնականում մնացին անփոփոխ:

Արդյունքում, եռաստիճան դատական համակարգի երկրորդ ատյան հանդիսացող ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը ներկայումս գերակշռող մեծամասնություն կազմող դեպքերում գործնականում հանդիսանում է դատական ակտի վերանայում իրականացնող վերջին ատյանը: Նման պայմաններում առավել քան կարևոր է դառնում ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից իր լիազորությունների իրավաչափ և արդյունավետ կիրառումը:

2007թ. տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերաքննիչ դատարանի լիազորություններին նվիրված իրավական նորմերը ենթարկվեցին արմատական փոփոխությունների՝ պայմանավորված վերաքննության լրիվ տեսակից ոչ լրիվ տեսակին անցմամբ: Դրական գնահատելով վերաքննիչ դատարանի լիազորությունները կանոնակարգող իրավանորմերում կատարված

հետագա օրենսդրական փոփոխությունները՝ այդուհանդերձ գտնում ենք, որ առկա իրավակարգավորումը դեռևս հեռու է կատարյալ լինելուց. մի շարք իրավանորմերում առկա ձևակերպումները տարըմբռնումների տեղիք են տալիս, ավելին, մի շարք հարցեր դուրս են մնացել օրենսդրի ուշադրությունից:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել խորքային փոփոխություններ կատարել վերաքննիչ դատարանի լիազորությունները կանոնակարգող իրավական նորմերում, ինչի մասին վկայում է նաև ատենախոսության մեջ բարձրացված մի շարք հարցերի կապակցությամբ ձևավորված և մեր կողմից ուսումնասիրված դատական պրակտիկան: ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորություններն ամրագրող իրավանորմերը վերջին տարիներին մի շարք գործերի շրջանակներում մեկնաբանության են ենթարկվել ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից, որպիսի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել վերաիմաստավորել այդ իրավանորմերը՝ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների տեսանկյունից:

Ավելին, ներկայումս շրջանառության մեջ է գտնվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ծավալուն և համակարգային փոփոխությունների կատարում վերաքննիչ վարույթը կարգավորող իրավական նորմերում: Նման պայմաններում օբյեկտիվորեն առաջանում է գործող ՔՂՕ-ի նորմերի և Նախագծով առաջարկվող նոր մոտեցումների իրավահամեմատական վերլուծություն կատարելու անհրաժեշտություն՝ դրանց առավելությունները և թերությունները վերհանելու նպատակով:

Այսպիսով, վերաքննիչ դատարանի՝ օրենսդրորեն ամրագրված լիազորությունները պրակտիկայի պահանջներին համապատասխանեցնելու, այդ լիազորություններից յուրաքանչյուրի նշանակությունը, նպատակը, իրավաչափ կիրառման պայմանները բացահայտելու և գործող դատավարական օրենսդրության մեջ առկա բացթողումներն ու թերությունները վերացնելու անհրաժեշտությունը օբյեկտիվորեն արդիականություն են հաղորդում սույն հետազոտությանը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Վերաքննիչ դատարանի լիազորություններին առնչվող հիմնախնդիրները հետազոտության են ենթարկվել խորհրդային և ժամանակակից դատավարագետների բազմաթիվ գիտական աշխատություններում: Հետազոտության թեմային առնչվող հիմնախնդիրները մի շարք դեպքերում դարձել են նաև ատենախոսությունների առարկա:

Այդ աշխատությունների և ատենախոսությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Վ.Վ. Հովհաննիսյանի, Ե.Ա. Բորիսովայի, Լ.Ա. Տերեխովայի, Յու. Ա. Տիմոֆեևի, Ե.Վ. Կարավաևայի և այլոց աշխատությունները:

Չնայած շարադրվածին՝ հարկ է նկատել, որ վերաքննիչ դատարանի լիազորություններին առնչվող հիմնախնդիրները հայրենական դատավարագիտության մեջ դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում դատական ակտի վերաքննության փուլում վերաքննիչ դատարանի առարկայական և գործառության լիազորությունների կիրառման արդյունքում ծագող դատավարական հարաբերությունները:

Հետազոտության առարկան: Որպես հետազոտության առարկա հանդես են գալիս վերաքննիչ դատարանի առարկայական և գործառության լիազորություններն ամրագրող իրավական նորմերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը վերաքննիչ դատարանի լիազորությունների հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը:

Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

- բնորոշել և դասակարգել վերաքննիչ դատարանի լիազորությունները,
- որոշել վերաքննիչ դատարանի լիազորություններից յուրաքանչյուրի իրավաբանական բնույթը, նպատակը և իրավաչափ կիրառման պայմանները,
- վեր հանել վերաքննիչ դատարանի լիազորություններին և դրանք ամրագրող իրավական նորմերին առնչվող տեսական հիմնախնդիրները և բացահայտել վերաքննիչ դատարանի լիազորությունների կիրառման հետ կապված գործնական խնդիրները՝ հնարավորինս ուսումնասիրելով դրանց կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկան,
- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել վերաքննիչ դատարանի լիազորություններն ամրագրող քաղաքացիական դատավարության օրենսդրության իրավանորմերի կատարելագործման առաջարկներ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է դատական ակտերի վերանայման ինստիտուտի կամ դրա առանձին հարցերի վերլուծությանը նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Ռ.Գ. Պետրոսյանի, Ս.Գ. Մեղրյանի, Վ.Վ. Հովհաննիսյանի, Տ.Ա. Մարկոսյանի, Ե.Ա. Բորիսովայի, Գ. Ա. Ժիլինի, Ի.Մ. Ջայցեվի, Վ.Ս. Կալմացկու, Կ.Ի. Կոմիսարովի, Լ.Ա. Տերեխովայի, Յու.Ա. Տիմոֆեևի, Մ.Կ. Տրեուշնիկովի, Վ.Վ. Յարկովի, Վ.Վ. Գրյազեվայի, Ե.Վ. Կարավաեվայի, Ս.Յու. Կատուկովայի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել վերաքննիչ դատարանի լիազորություններին առնչվող ՀՀ և արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի և ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչ-

պես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդների օգտագործմամբ:

Հետազոտության գիտական նորույթը: Թեև վերաքննիչ դատարանի լիազորություններին առնչվող որոշ հիմնախնդիրներ հետազոտության են ենթարկվել մի շարք դատավարագետների աշխատություններում, այդուհանդերձ հայրենական իրավագիտության մեջ դեռևս բացակայում են վերաքննիչ դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով (այսուհետ՝ ՀՀ դատական օրենսգիրք կամ ԴՕ) ամրագրված լիազորությունների ուսումնասիրությանը նվիրված համընդգրկուն աշխատությունները:

Սույն հետազոտությունը հանդիսանում է վերաքննիչ դատարանի լիազորություններն ամրագրող իրավանորմերի համակողմանի ուսումնասիրությանը և վերլուծությանը նվիրված աշխատություն, որում փորձ է կատարվել հնարավորինս մանրամասնորեն անդրադառնալ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի առարկայական և գործառնության լիազորությունների կիրառման հետ կապված մի շարք տեսական բնույթ կրող հիմնահարցերի և այդ լիազորությունների կիրառման ընթացքում ծագող գործնական խնդիրներին՝ ներկայումս ՀՀ-ում գործող վերաքննության մոդելի շրջանակներում առաջարկելով այդ խնդիրների լուծման ուղիներ:

Ատենախոսության գիտական նորույթն առաջին հերթին դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և հեղինակի կողմից ատենախոսության եզրակացության մեջ ամփոփված մի շարք առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Ատենախոսության շրջանակներում առաջարկվել է ընդլայնել միջանկյալ (գործն ըստ էության չլուծող) դատական ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կիրառման ենթակա լիազորությունների շրջանակը և վերաքննիչ դատարանին վերապահել բողոքարկված միջանկյալ (գործն ըստ էության չլուծող) դատական ակտը վերացնելու և հարցն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու լիազորություն:

2. Ատենախոսության շրջանակներում առաջարկվել է հրաժարվել «վերաքննիչ բողոքի հիմքեր» և «վերաքննիչ բողոքի հիմնավորումներ» եզրույթներից և դրանց փոխարեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք ներմուծել «վերաքննիչ բողոքի փաստարկներ» հասկացությունը՝ ամրագրելով վերաքննիչ բողոքը դրանում շարադրված փաստարկների սահմաններում քննելու օրենսդրական պահանջ: Ընդ որում, «վերաքննիչ բողոքի փաստարկներ» պետք է համարել վերաքննիչ բողոք բերած անձի կողմից ներկայացված ցանկացած բնույթի հիմնավորումները, որոնց հիման վրա բողոք բերած անձը պահանջում է դատական ակտի բեկանում:

3. Գործող օրենսդրական նորմերը գործնականում անհնարին են դարձնում վերաքննիչ դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու լիազորության իրավաչափ կիրառումը: Ատենախոսության մեջ առաջարկվել է հարավորինս պարզեցնել հիշյալ լիազորության իրավա-

չափ կիրառման պայմանները՝ լիազորության կիրառումը կախվածության մեջ դնելով ոչ թե սուբյեկտիվ և գնահատողական, այլ՝ բացառապես օբյեկտիվ բնույթ ունեցող պայմաններից: Մասնավորապես, առաջարկվել է քննարկվող լիազորության կիրառումը կախվածության մեջ չդնել «արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունից և պայմանավորել բացառապես ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստերի բավարարությամբ՝ լրացուցիչ ամրագրելով, որ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը չի կարող կիրառվել, եթե վերաքննիչ դատարանը որևէ կերպ փոփոխել է առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը: Բացի այդ, ատենախոսության շրջանակներում առաջարկվել է վերաքննիչ դատարանին վերապահել դատական ակտը ոչ թե մասնակիորեն, այլ՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորություն:

4. Առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ, սակայն օժտված է նման ակտերին բնորոշ հատկանիշներով. այն չի կայացվում գործի ըստ էության քննության արդյունքում, սակայն գործին մասնակցող անձանց համար ուղղակիորեն սահմանում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ՝ առաջին ատյանի դատարանի վճիռից տարբերվող ծավալով: Հիմք ընդունելով այն պնդումը, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր համար սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ ամրագրող դատական ակտն առնվազն մեկ անգամ բողոքարկելու իրավունք և ելնելով այդ իրավունքն ապահովելու անհրաժեշտությունից՝ առաջարկվել է գործող իրավակարգավորումը փոփոխել այնպես, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունի բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշում:

5. Ատենախոսության շրջանակներում առաջարկվել է օրենսդրական կարգավորման ենթարկել վերաքննիչ դատարանում հաշտության համաձայնության կնքման գործընթացը՝ հաշվի առնելով այս փուլում հաշտության համաձայնության կնքման առանձնահատկությունները: Մասնավորապես, առաջարկվել է վերաքննիչ դատարանին վերապահել բողոքի քննությունը վերսկսելու լիազորություն այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը որոշման կայացման փուլում պարզում է, որ ներկայացված հաշտության համաձայնությունը ենթակա չէ հաստատման՝ օրենքին հակասելու կամ այլ անձանց իրավունքները և օրինական շահերը խախտելու պատճառով:

6. Վերաքննիչ դատարանի կողմից ապացույցներ ընդունելու հետ կապված իրավակարգավորումները թերի են և որոշակի շտկման անհրաժեշտություն ունեն, մասնավորապես՝

ա) անհրաժեշտ է ամրագրել, որ մի շարք դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից գործին մասնակցող անձանց ներկայացրած ապացույցների ընդունումը

չի հանգեցնում բողոքարկված դատական ակտի բեկանման և գործը նոր քննության ուղարկելուն: Ասվածը մասնավորապես վերաբերում է այն ապացույցներին, որոնք՝ 1) վերաբերում են վերաքննիչ դատարանին ներկայացվող միջնորդություններին և հիմնավորում են այդ միջնորդությունների հիմքում դրված փաստերը, 2) վերաբերում են վերաքննիչ դատարանում գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերին.

բ) անհրաժեշտ է ՔԴՕ-ով ամրագրել, որ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերից որևէ մեկի առկայությունը հիմնավորող ապացույցի ընդունման դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է կիրառել դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու, այլ ոչ թե՝ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու լիազորությունը.

գ) անհրաժեշտ է ՔԴՕ-ով ամրագրված իրավակարգավորումից նախատեսել բացառություններ՝ սահմանելով, որ վերը նշված ապացույցները վերաքննիչ դատարանի կողմից կարող են ընդունվել առանց որևէ սահմանափակման.

դ) քննարկելով վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելու պայմանները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներում ամրագրել է, որ վերաքննիչ դատարանի կողմից չի կարող ընդունվել այն ապացույցը, որն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում օբյեկտիվորեն առկա չի եղել: Ատենախոսության մեջ առաջ է քաշվել այն միտքը, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ավարտից հետո ստեղծված ապացույցման միջոցի ընդունելիության հարցը լուծելիս վերաքննիչ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդյո՞ք գործին մասնակցող անձի կողմից համապատասխան ջանքեր գործադրվելու դեպքում այդ ապացույցման միջոցն օբյեկտիվորեն կարող էր ստեղծվել ավելի վաղ: Եթե տվյալ ապացույցման միջոցն օբյեկտիվորեն կարող էր ստեղծվել ավելի վաղ, ապա վերաքննիչ դատարանը չպետք է ընդունի այն որպես նոր ապացույց: Եթե ապացույցման միջոցն օբյեկտիվորեն չէր կարող ստեղծվել ավելի վաղ, ապա վերաքննիչ դատարանը պետք է ընդունի այն որպես նոր ապացույց:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է վերաքննիչ դատարանի առարկայական և գործառնության լիազորությունների ուսումնասիրությանը և դրանց կիրառման ընթացքում առաջացող գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է վերաքննիչ դատարանի լիազորությունների ուսումնասիրությանը:

Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության ժամանակ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում:

Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկների որոշ մասն իրենց ամրագրումն են ստացել նաև ՀՀ արդարադատության նախարարության աշխատանքային խմբի (որի անդամներից է եղել նաև հեղինակը) կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 11 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ցույց են տրված հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը, ինչպես նաև ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը` «Վերաքննիչ դատարանի լիազորությունների հասկացությունը և դրանց դասակարգումը. գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կիրառվող առարկայական լիազորությունները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում` «Վերաքննիչ դատարանի լիազորությունների հասկացությունը և դրանց դասակարգումը» վերտառությամբ, հեղինակի կողմից ներկայացվել են վերաքննիչ դատարանի լիազորությունների` իրավաբանական գրականության մեջ առկա բնորոշումները և քննարկվել են վերաքննիչ դատարանի լիազորությունների դասակարգման հետ կապված հիմնահարցերը:

Հեղինակի կողմից ներկայացվել են Վ. Ս. Կալմացկու, Յու. Ա. Տիմոֆեևի, Վ. Վ. Հովհաննիսյանի և այլոց կողմից առաջարկվող վերաքննիչ դատարանի լիազորությունների դասակարգումները: Հեղինակը համաձայնվել է Վ. Վ. Հովհաննիսյանի կողմից առաջարկվող դասակարգման հետ, համաձայն որի՝ վերաքննիչ դատարանի լիազորություններն ըստ ուղղվածության կարելի է դասակարգել առարկայականի և գործառութայինի՝ առարկայական լիազորությունների շարքում առանձնացնելով գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կիրառվող լիազորությունները, իսկ գործառութային լիազորությունները կարելի է պայմանականորեն դասակարգել կազմակերպական և կանխարգելող լիազորությունների: Վերաքննիչ դատարանի կազմակերպական լիազորություններն ուղղված են վերաքննության կազմակերպմանը և կրում են նաև առաջին ատյանի դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելուն օժանդակող բնույթ: Վերաքննիչ դատարանի կանխարգելող լիազորություններն ուղղված են ոչ իրավաչափ իրականացված բողոքարկման, ինչպես նաև դատավարական օրենսդրությամբ ամրագրված արգելքների առկայության պարագայում դատական ակտերի վերաքննիչ վերանայումը բացառելուն և խափանում են վերաքննիչ վարույթի հետագա ծագումն ու ընթացքը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը» վերտառությամբ, հեղինակի կողմից նախ և առաջ քննարկվել են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում միջանկյալ դատական ակտերը թողնվում են անփոփոխ, իսկ դրանց դեմ բերված վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

Հեղինակն անդրադարձել է նաև այն խնդրին, որ վերաքննիչ դատարանն օժտված չէ թերի կամ սխալ պատճառաբանված, սակայն ըստ էության ճիշտ միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու և այն լրացուցիչ պատճառաբանելու լիազորությամբ, ինչը հանդիսանում է իրավական բաց և ենթակա է շտկման:

Հեղինակն անդրադարձել է նաև բողոքարկված միջանկյալ դատական ակտն անփոփոխ թողնելու և վերաքննիչ բողոքը մերժելու լիազորության կիրառման դեպքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշմանը ներկայացվող պահանջներին՝ նշելով, որ քննարկվող լիազորության կիրառման դեպքում, վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորումը ենթադրում է ոչ թե բողոքարկված միջանկյալ դատական ակտում պարունակվող փաստարկների կրկնություն, այլ՝ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին կատարված հստակ անդրադարձ և բողոքի փաստարկների հերքում:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը

բավարարելու և բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու կամ նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը» վերտառությամբ, հեղինակը նախ և առաջ քննարկել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման տարբերությունը դատարանին ուղղված այն դիմումներից և միջնորդություններից, որոնցով գործին մասնակցող անձը դատարանից խնդրում է վերացնել կամ փոխել նախկինում իր կողմից ընդունված որոշումը:

Հեղինակի կողմից առաջ է քաշվել այն միտքը, որ վերաքննիչ դատարանի՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման արդյունքում կիրառելի առարկայական լիազորությունները երբեմն բավարար չեն վերջինիս առջև դրված խնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար: Հեղինակն առաջարկում է վերաքննիչ դատարանին վերապահել բողոքարկված միջանկյալ դատական ակտը վերացնելու և քննարկվող հարցն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու լիազորություն՝ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում որևէ պատճառով չի կարողանում վերջնական եզրահանգում կատարել քննարկվող հարցի վերաբերյալ:

Երկրորդ գլուխը՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կիրառվող առարկայական լիազորությունները» վերտառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու, դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու և անփոփոխ թողնված վճիռը լրացուցիչ պատճառաբանելու լիազորությունը» վերտառությամբ, հեղինակի կողմից նախ և առաջ անդրադարձ է կատարվել հիշյալ լիազորության իրավաչափ կիրառման պայմաններին՝ նշելով բոլոր այն դեպքերը, երբ տվյալ լիազորությունը ենթակա է կիրառման:

Այնուհետև հեղինակը «վճռի օրինականություն», «վճռի հիմնավորվածություն» և «վճռի պատճառաբանվածություն» հասկացությունների համատեքստում քննարկել է այն հարցը, թե ինչ է իրենից ներկայացնում գործն ըստ էության ճիշտ լուծող, սակայն թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտը:

Հեղինակը բացահայտել է քննարկվող լիազորության կապը դատական ակտի նախադատելիության ինստիտուտի և ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված «իրավական փաստարկ» հասկացության հետ՝ քննարկելով այն հարցերը, թե.

- արդյո՞ք նախադատելի է օրինական ուժի մեջ մտած այն վճիռը, որը ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգով լրացուցիչ պատճառաբանվել է վերաքննիչ դատարանի կողմից,

- արդյո՞ք վերաքննիչ դատարանի կողմից լրացուցիչ պատճառաբանված օրինական ուժի մեջ մտած վճիռն ունի իրավական փաստարկի ուժ:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և բեկանված մասով գործը համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը» վերտառությամբ, հեղինակի կողմից քննարկվել են հիշյալ լիազորության կիրառման հետ կապված խնդրահարույց հարցերը:

Հեղինակի կողմից քննարկվել է դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելու և բեկանելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջը: Վերոգրյալի համատեքստում հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել «վերաքննիչ բողոքի հիմքեր» և «վերաքննիչ բողոքի հիմնավորումներ» հասկացություններին:

Հեղինակի կողմից արվել են մի շարք խնդրահարույց հարցադրումներ՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելու օրենսդրական պահանջի հետ կապված: Հեղինակը եզրահանգել է, որ նման իրավակարգավորման պայմաններում բողոք բերած անձը պարտավոր է տիրապետել իրավական գիտելիքների և իրավաբանական տեսանկյունից ճշգրիտ և գրագետ կերպով ձևակերպել իր բողոքը, իսկ հակառակ դեպքում, անգամ ըստ էության ճիշտ լինելու պարագայում, վերաքննիչ բողոքը ենթակա կլինի մերժման՝ ձևական սխալների առկայության պատճառով:

Ներկայացնելով այս կապակցությամբ մի շարք արտասահմանյան երկրներում գործող իրավակարգավորումները՝ հեղինակն արդարացված չի համարել օրենսդրի նման մոտեցումը և առաջարկել է փոփոխել գործող իրավակարգավորումն այնպես, որ իրավական գիտելիքների բացակայությունը չհանգեցնի վերաքննիչ բողոքի՝ ձևական հիմքերով մերժմանը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանելու և կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու լիազորությունը» վերտառությամբ, հեղինակի կողմից նախ և առաջ քննարկման առարկա է դարձել (տնօրինչականության) դիսպոզիտիվության սկզբունքը և դրա դերը քաղաքացիական դատավարությունում:

Հեղինակը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի պարունակում որևէ հատուկ նորմ՝ դատական ակտի վերաքննության փուլում կնքվող հաշտության համաձայնության վերաբերյալ, հետևաբար այդտեղ պետք է գործեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր նորմերը:

Հեղինակի կողմից քննարկվել է այն հարցը, թե ինչպես պետք է վարվի վերաքննիչ դատարանը, եթե որոշման կայացման փուլում պարզվել է, որ կողմերի կողմից վերաքննիչ դատարանին ներկայացված հաշտության համաձայնությունը հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Հեղինակն առաջարկել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացնել վերաքննիչ դատարանում կողմերի հաշտության համաձայնության հաստատման գործընթացը կարգավորող իրա-

վանորմով՝ վերաքննիչ դատարանին հնարավորություն տալով հաշտության համաձայնությունը չհաստատվելու դեպքում վերսկսել բողոքի քննությունը:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Դատական ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորությունը» վերտառությամբ, հեղինակի կողմից քննարկվել են հիշյալ լիազորության նպատակը, բնույթը և իրավաչափ կիրառման պայմանները:

Քննարկելով հիշյալ լիազորության կիրառման համար անհրաժեշտ պայմանները՝ հեղինակն արձանագրում է, որ գործող օրենսդրական նորմերը անհարկի բարդացնում են վերաքննիչ դատարանի կողմից հիշյալ լիազորության իրավաչափ կիրառումը: Վերոգրյալից ելնելով՝ հեղինակն առաջարկում է որոշակիորեն փոփոխել գործող օրենսդրական նորմերը՝ պարզեցնելով քննարկվող լիազորության իրավաչափ կիրառման պայմանները և դրա կիրառումը պայմանավորել ոչ թե գնահատողական և սուբյեկտիվ բնույթ կրող չափանիշի (արդարադատության արդյունավետության շահի) առկայությամբ, այլ՝ օբյեկտիվ հանգամանքներով (ընդհանուր իրավասության դատարանի կողմից հաստատած փաստերի բավարարությամբ):

Անդրադառնալով հիշյալ լիազորության կիրառման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշման իրավական բնույթին՝ հեղինակը եզրահանգել է, որ ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ, սակայն օժտված է նման ակտերին բնորոշ հատկանիշներով: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի պարունակում նման որոշումների բողոքարկման արդյունավետ կառուցակարգեր:

Հեղինակը եզրահանգել է, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր համար սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և/կամ պարտականություններ ամրագրող դատական ակտն առնվազն մեկ անգամ բողոքարկելու իրավունք: Ասվածի հիման վրա հեղինակն առաջարկել է օրենսդրորեն ամրագրել, որ վճռաբեկ դատարանը պետք է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունի բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվող որոշումը վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է քննարկվող լիազորության կիրառման արդյունքում:

Երկրորդ գլխի հինգերորդ պարագրաֆում՝ «Դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու լիազորությունը» վերտառությամբ, հեղինակը համաձայնվել է Լ. Ա. Տերեխովայի այն տեսակետի հետ, որ վերաքննիչ դատարանի հիշյալ լիազորությունը ծառայում է քաղաքացիական դատավարության վերջնական նպատակներին այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում ի հայտ են եկել տվյալ լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող հանգամանքները:

Հեղինակն անդրադարձել է հիշյալ լիազորության կիրառման և վերաքննության սահմանների հարաբերակցության հիմնախնդրին՝ նշելով, որ ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը (վերաքննիչ դատարանի կողմից վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշման իրավական բնույթին՝ հեղինակը եզրահանգել է, որ ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ, սակայն օժտված է նման ակտերին բնորոշ հատկանիշներով: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի պարունակում նման որոշումների բողոքարկման արդյունավետ կառուցակարգեր:

րանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում) չի կարող բացարձակ բնույթ կրել գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայության դեպքում. վերաքննիչ դատարանին պետք է վերապահվի դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու լիազորություն՝ անկախ բողոքի հիմքերից, հիմնավորումներից և պահանջից:

Երրորդ գլուխը՝ «Վերաքննիչ դատարանի գործառութային լիազորությունները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆը՝ «Վերաքննիչ դատարանի կազմակերպական լիազորությունները» վերտառությամբ, նվիրված է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կազմակերպական բնույթ ունեցող գործառութային լիազորություններին:

Սույն պարագրաֆում հեղինակի կողմից քննարկվել են վերաքննիչ դատարանի այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը, գործի քննությունը հետաձգելը, գործի վարույթը կասեցնելը, վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելը և նոր փաստ հաստատելը:

Քննարկելով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու լիազորությանն առնչվող իրավակարգավորումները՝ հեղինակը գալիս է եզրահանգման, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, սահմանելով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու միայն ընդհանուր ժամկետ, հաշվի չի առնում, որ օրենքով նախատեսված մի շարք դեպքերում այդ ժամկետն օբյեկտիվորեն չի կարող կիրառվել, հետևաբար ՔԴՕ-ում առկա է իրավական բաց, որը ենթակա է շտկման: Հեղինակն առաջարկում է ՔԴՕ-ն լրացնել համապատասխան ժամկետներ սահմանող իրավանորմով:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույց ընդունելու լիազորությանը՝ հեղինակը քննարկել է ՔԴՕ-ով նախատեսված՝ վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցներ ընդունելու պայմանները և այդ կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կանոնները: Քննարկվող լիազորության կապակցությամբ հեղինակը եկել է եզրահանգման, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցի ընդունելիության՝ ՔԴՕ-ով սահմանված կանոնները (սահմանափակումները) որոշ դեպքերում կիրառման ենթակա չեն:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից նոր փաստ հաստատելու լիազորությանը՝ հեղինակը նշել է, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր փաստեր հաստատելու լիազորությունը սերտորեն կապված է ապացույցների հետազոտման և գնահատման գործընթացի հետ, մինչդեռ ՔԴՕ-ն չի պարունակում որևէ դրույթ վերաքննիչ դատարանում ապացույցների հետազոտման ընթացակարգի մասին, ինչը հանդիսանում է օրենսդրական բաց և ենթակա է շտկման:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆը՝ «Վերաքննիչ դատարանի կանխարգելող լիազորությունները» վերտառությամբ, նվիրված է ՀՀ վերաքննիչ քաղա-

քացիական դատարանի կանխարգելող բնույթ ունեցող գործառույթային լիազորություններին:

Սույն պարագրաֆում հեղինակի կողմից քննարկվել են վերաքննիչ դատարանի այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելը և վերաքննիչ բողոք բերած անձի կողմից բողոքը հետ վերցնելու հետևանքով վերաքննիչ վարույթը կարճելը:

Անդրադառնալով բողոքը հետ վերցնելու հետևանքով վերաքննիչ վարույթը կարճելու լիազորությանը՝ հեղինակը քննարկել է այն հարցը, թե ինչու է օրենսդիրը սահմանափակել վերաքննիչ բողոքը հետ վերցնելու իրավունքը՝ սահմանելով, որ այն կարող է իրականացվել մինչև վերաքննիչ դատարանի կողմից գործի քննությունը սկսվելը: Գտնելով, որ օրենսդրի վերը նշված մոտեցումը համահունչ է քաղաքացիական դատավարությունում գործող դիսպոզիտիվության (տնօրինչականության) սկզբունքին՝ հեղինակը եզրահանգել է որ վերաքննիչ բողոքը հետ վերցնելը պետք է թույլատրվի մինչև վերաքննիչ դատարանի կողմից գործի քննությունն ավարտելու պահը:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքը վերադարձնելու լիազորությանը՝ հեղինակը քննարկել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը և դրանք ամրագրող իրավական նորմերում առկա թերությունները և բացերը՝ առաջարկելով վերաքննիչ դատարանին վերապահել բողոքում առկա ձևական թերությունների մատնանշման և բողոք բերած անձին դրանք շտկելու հնարավորություն տալու լիազորություն ոչ միայն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու փուլում (վերաքննիչ բողոքը վերադարձնելու եղանակով), այլև՝ բողոքի քննության ընթացքում:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Վերաքննիչ դատարանի գործառույթային լիազորությունների հետ կապված մի շարք արդի հիմնախնդիրներ» վերտառությամբ, հեղինակի կողմից քննարկվել է վերաքննիչ դատարանին մի շարք լրացուցիչ գործառույթային լիազորություններով օժտելու նպատակահարմարությունը:

Սույն պարագրաֆում հեղինակի կողմից քննարկվել է վերաքննիչ դատարանին մասնավոր որոշումների կայացման լիազորություն վերապահելու նպատակահարմարությունը: Հեղինակը եզրահանգել է, որ վերաքննիչ դատարանին նման լիազորության տրամադրումը չի կարող արդարացված լինել:

Քննարկելով վերաքննիչ դատարանին հայցի ապահովման և դատական ակտի կատարման ապահովման լիազորություններ վերապահելու հարցը՝ հեղինակն արդարացված չի համարել ներկայումս գործող իրավակարգավորումը, համաձայն որի՝ վերաքննիչ դատարանը զրկված է կայացվելիք դատական ակտի կատարումն ապահովելու և այդ կապակցությամբ երաշխիքներ ստեղծելու հնարավորությունից:

Հեղինակը քննարկել է վերաքննիչ դատարանին բողոքարկված դատական ակտի գործողությունը կասեցնելու լիազորություն տրամադրելու նպատակահարմարության հարցը՝ առաջարկելով վերաքննիչ դատարանին վերապահել

օրինական ուժի մեջ մտած վճռի գործողությունը կասեցնելու հայեցողական լիազորություն՝ այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը վարույթ է ընդունել օրինական ուժի մեջ մտած վճռի դեմ բերված վերաքննիչ բողոք:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկները:

Ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, այդ եզրահանգումները և առաջարկներն ամփոփ հանգում են հետևյալին.

1. ՔԴՕ-ի 221-րդ հոդվածը անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող իրավանորմով. «Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում վերաքննիչ դատարանն իրավունք ունի.

1) վերացնել բողոքարկված դատական ակտը,

2) վերացնել բողոքարկված դատական ակտը և կայացնել դրան փոխարինող նոր դատական ակտ,

3) վերացնել բողոքարկված դատական ակտը և հարցն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության»:

2. ՔԴՕ-ի 52-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է լրացնել հետևյալ նախադասությամբ. «Հանգամանքի նախադատելիությունը գնահատելիս՝ դատարանը պետք է հաշվի առնի վճռի բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտերում տվյալ հանգամանքի վերաբերյալ վերադաս դատարանների կողմից արտահայտված դիրքորոշումները»: ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է լրացնել հետևյալ նախադասությամբ. «Մատնանշված իրավական փաստարկը գնահատելիս՝ դատարանը պետք է հաշվի առնի նաև վկայակոչված դատական ակտի բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտերի հիմնավորումները»:

3. ՔԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ: Սույն կետով սահմանված լիազորությունը չի կարող կիրառվել, եթե վերաքննիչ դատարանը կիրառել է սույն օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված լիազորություններից որևէ մեկը»:

4. ՔԴՕ-ի 234-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող 4-րդ կետով. «4) բողոքարկվող դատական ակտը կայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորության կիրառման արդյունքում»:

5. Անհրաժեշտ է ՔԴՕ-ի 219-րդ հոդվածից սահմանել բացառություններ և վերաքննիչ դատարանին վերապահել՝ 1) բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակից դուրս գալով՝ դատական ակտը բեկանելու և գործի վարույթը

կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու լիազորություն, 2) առանց ՔԴՕ-ով նախատեսված սահմանափակումների նոր ապացույցներ ընդունելու և այդ ապացույցների հիման վրա դատական ակտը բեկանելու և հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու լիազորություն:

6. Անհրաժեշտ է ՔԴՕ-ի 214-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող նախադասությամբ. «Սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացվում է վերաքննիչ բողոքը ներկայացնելու պահից սկսած մեկամսյա ժամկետում»:

7. ՔԴՕ-ի 219-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն անհրաժեշտ է վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3. Վերաքննիչ բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանի դատական ակտով հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստ, և վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցների հետազոտման արդյունքում հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստը հաստատված համարելիս առաջին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պարտավոր է հաստատված չհամարել առաջին ատյանի դատարանի հաստատած փաստը:

4. Եթե առաջին ատյանի դատարանն իր դատական ակտով հաստատված չի համարել որևէ փաստ, որը պարտավոր էր հաստատված համարել՝ ելնելով գործում առկա ապացույցներից, ապա վերաքննիչ դատարանը պարտավոր է հաստատված համարել այդ փաստը, եթե բողոքում վիճարկվում է առաջին ատյանի դատարանի կողմից տվյալ փաստի չհաստատումը»:

8. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու փուլում կարող է չնկատել բողոքում առկա ձևական բնույթ կրող և վերացվելի թերությունները, որոնք կարող են ի հայտ գալ գործի քննության ընթացքում: ՔԴՕ-ն չի նախատեսում գործի քննության ընթացքում հայտնաբերված ձևական թերությունների վերացման մեխանիզմներ, ինչը օրենսդրական բաց է և շտկման կարիք ունի:

9. Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ վերաքննիչ բողոքը ենթակա է քննության միայն սկզբնապես ներկայացված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում: Բողոքում առկա թերությունների վերացումից հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները (եթե դրանք լրացվել են) վերաքննիչ դատարանի կողմից չպետք է հաշվի առնվեն:

10. Անհրաժեշտ է փոփոխել ՔԴՕ-ի իրավակարգավորումն այնպես, որ վերաքննիչ բողոքում բողոքի հիմքերի և/կամ հիմնավորումների լրիվ բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը բերած անձին չտրամադրվի լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ՝ բողոքում առկա թերությունները վերացնելու (բողոքը հիմնավորելու) համար:

11. Վերաքննիչ դատարանին անհրաժեշտ է տրամադրել օրինական ուժի մեջ մտած, սակայն վերաքննության կարգով բողոքարկված վճռի գործողությունը կասեցնելու հայեցողական լիազորություն՝ այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը, ՔԴՕ-ով նախատեսված համապատասխան հիմքերի առկայության դեպքում, վարույթ է ընդունել օրինական ուժի մեջ մտած վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու դեպքում կայացվող որոշման բնույթը և դրա բողոքարկման հետ կապված հիմնախնդիրները // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2014, էջեր 156-181,

2. Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու լիազորության բնույթը և կիրառման համար անհրաժեշտ պայմանների հետ կապված հիմնախնդիրները // Պետություն և իրավունք, Եր., 2014, 3-4 (65-66), էջեր 113-125,

3. Վերաքննիչ դատարանի կազմակերպական-կարգադրիչ լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում // Պետություն և իրավունք, Եր., 2015, 1 (67), էջեր 75-86,

4. Միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու լիազորության կիրառման հետ կապված հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2015, էջեր 348-364,

5. Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից ընդհանուր իրավասության դատարանի վճիռը վերանայելու սահմանների հետ կապված հիմնախնդիրները // Դատական իշխանություն, Եր., 2015, 3-4 (189-190), էջեր 116-125:

ГРИГОРЯН ВААГН ОВИКОВИЧ

ПРОБЛЕМЫ ПОЛНОМОЧИЙ АПЕЛЛЯЦИОННОГО СУДА
В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

РЕЗЮМЕ

Настоящая диссертационная работа на соискание ученой степени кандидата юридических наук посвящена всестороннему изучению и анализу правовых норм, закрепляющих полномочия апелляционного суда, а также возникающим в процессе применения этих полномочий проблемам и их возможным решениям.

Ряд фундаментальных проблем, связанных с полномочиями апелляционного суда, были исследованы в научных трудах процессуалистов советского и современного периода. Более того, вопросы, связанные с тематикой данной диссертации, в ряде случаев становились также предметом кандидатских и докторских диссертационных работ.

Несмотря на вышеизложенное, следует отметить, что основные вопросы, касающиеся полномочий апелляционного суда, в отечественной процессуальной науке изучены еще далеко неполностью: отсутствуют комплексные работы, посвященные изучению полномочий апелляционного суда.

Об актуальности диссертационной темы также свидетельствует то обстоятельство, что правовые нормы, закрепляющие полномочия Апелляционного гражданского суда РА, в ряде случаев истолковывались Конституционным судом РА и Кассационным судом РА. В сложившихся условиях возникла необходимость переосмысления этих правовых норм с точки зрения выраженных в постановлениях Конституционного суда РА и Кассационного суда РА правовых позиций.

В рамках данной работы автором была поставлена цель – комплексно изучить теоретические и практические вопросы, связанные с применением полномочий Апелляционного гражданского суда РА и на основании этого разработать предложения, направленные на совершенствование законодательной и правоприменительной практики.

В рамках настоящего исследования автор подробно разбирает вопросы, связанные с определением и классификацией полномочий апелляцион-

ного суда и подвергает детальному анализу правовые нормы, касающиеся предметных и функциональных полномочий Апелляционного гражданского суда РА.

В главах, посвященных предметным полномочиям апелляционного суда, автор по отдельности упоминает полномочия, применяемые апелляционным судом по результатам обжалования разрешающих дело по существу и не разрешающих дело по существу (промежуточных) судебных актов. В главе, посвященной функциональным полномочиям апелляционного суда, автор затрагивает организационные и предупредительно-профилактические полномочия апелляционного суда, касаясь также ряда актуальных вопросов, связанных с функциональными полномочиями апелляционного суда.

В соответствующих главах диссертационной работы автор пытается по возможности всесторонне проанализировать и обсудить цель и роль каждого из полномочий апелляционного суда, а также условия их правомерного применения.

В ряде случаев автором демонстрируются такие ситуации, когда апелляционный суд по причине неполноценного законодательного регулирования бывает лишен возможности применить в данной ситуации объективно необходимое и подлежащее применению полномочие.

Наряду с изучением нашедших место в юридической литературе мнений по поводу выдвинутых в рамках настоящего исследования вопросов, автором использовалась также судебная практика, сформировавшаяся в Республике Армения в связи с применением правовых норм, закрепляющих полномочия апелляционного суда.

На основании проведенных исследований автором не только были сделаны определенные, несущие теоретический характер выводы, но, в связи с обсуждаемыми в диссертационной работе вопросами, также разработан и представлен ряд предложений, направленных на совершенствование законодательной и судебной практики.

VAHAGN HOVIK GRIGORYAN

ISSUES OF COURT OF APPEAL POWERS WITHIN
CIVIL PROCEEDINGS

SUMMARY

This dissertation submitted for degree of candidate of juridical sciences is dedicated to comprehensive study and analysis of legal norms, stipulating the powers of the Court of Appeal, as well as to the problems which emerge in the course of implementation of these powers and the ways of possible solutions thereof.

Studies on a series of issues related to the powers of the Court of Appeal are presented in the scientific works of Soviet and contemporary processualists. In addition, the issues related to the subject of the dissertation have become a subject of a number of doctoral and post-doctoral dissertations.

Notwithstanding the abovementioned, it should be noted that the issues related to the powers of the Court of Appeal have not been fully studied in the domestic processualism yet; comprehensive works dedicated to the study of the powers of the Court of Appeal are lacking.

The relevance of the subject of the dissertation is also evidenced by the fact that the legal norms stipulating the powers of the Civil Court of Appeal were construed by the Constitutional Court of the Republic of Armenia and the Court of Appeal of the Republic of Armenia in a number of instances, in which cases a necessity emerged to redefine those legal norms within the perspective of the legal views reflected in the decisions of the Constitutional Court of the Republic of Armenia and the Court of Appeal of the Republic of Armenia.

The author aims to carry out – within the scope of the research – a comprehensive study of the theoretical and practical issues related to the exercise of the powers of Civil Court of Appeal of the Republic of Armenia and to elaborate on proposals, aimed at the enhancement of the legislation and law enforcement practice.

Within the framework of the research, the author discusses the issues pertaining to the definition and classification of the powers of the Civil Court of Appeal of the Republic of Armenia, and the legal norms relating to the substan-

tive and functional powers of the Civil Court of Appeal of the Republic of Armenia.

In the chapters dedicated to the substantive powers of the Court of Appeal, the author makes separate references to the powers which the Court of Appeal implements as a result of appeal on judicial acts disposing the case on merits and not disposing the case on merits (interim). In the chapter dedicated to the functional powers of the Court of Appeal, the author refers to the organizational and preventive powers of the Court of Appeal, while discussing as well a number of relevant issues relating to the functional powers of the Court of Appeal.

In respective chapters of the dissertation, the author attempts to analyze and discuss, as comprehensively as possible, the aim and the role of each of the powers of the Court of Appeal, as well as the terms of legitimate implementation thereof.

In a number of cases, the authors brings forward situations when the Court of Appeal is deprived – due to incomplete legislative regulation – of the possibility to implement a power which is objectively required and is subject to implementation in the given situation.

With regard to the issues raised within the framework of the research, the author has used – alongside with the study of the opinions contained in legal literature – the judiciary practice formed in the Republic of Armenia in respect of the application of the legal norms stipulating the powers of the Court of Appeal.

Based on the research carried out, the author has drawn not only conclusions of certain theoretical nature, but a number of proposals aimed at the enhancement of legislation and judiciary practice have been developed on and presented with regard to the issues discussed in the dissertation.